02.03.24 - 04.03.24
09:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
Երևանի պետական համալսարան

Ս.թ. մարտի 2-4-ը՝ ժամը 9:30-ին, Երևանի պետական համալսարանում կանցկացվի «Քիմիա» առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլը, որին կմասնակցեն դպրոցական և մարզային փուլերը հաղթահարած 91 աշակերտներ։

Աշակերտներն օլիմպիադայի այս փուլի շրջանակում կմասնակցեն երկու ենթափուլի՝ *տեսական* և *փորձնական*: Տեսական փուլում աշակերտներին կտրվեն հարցեր և խնդիրներ, իսկ փորձնական փուլում մասնակիցները Քիմիայի ֆակուլտետի և Ֆարմացիայի ինստիտուտի ուսումնական լաբորատորիաներում կկատարեն պահանջվող քիմիական փորձեր՝ ներկայացնելով համապատասխան եզրահանգումներ։

Օլիմպիադայի շրջանակում կկազմակերպվեն նաև ուսուցիչների հետ հանդիպումներ, որոնց ընթացքում կքննարկվեն ինչպես տեսական և փորձնական փուլերի առաջադրանքները, այնպես էլ կազմակերպական մի շարք հարցեր։

Ս.թ. մարտի 4-ին՝ օլիմպիադայի փակման արարողության ժամանակ, հաղթողները կստանան մրցանակներ։

Օլիմպիադայի փակման արարողությանը ներկա կլինեն Քիմիայի ֆակուլտետի դեկանը, Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենը, ՀՀ ԳԱԱ նախագահը և ՀՀ ԳԱԱ ինստիտուտների ներկայացուցիչներ։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am